ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հունիսի 12-ից 14-ը Իտալիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**
Գնել Սանոսյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**
Իտալիայի Հանրապետություն (ք. Հռոմ), 2023թ. հունիսի 12-ից 14-ը

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**
«Այ Ար Դի Ինջիներինգ» (IRD Engineering) կազմակերպության գործադիր տնօրեն Պաոլո Օրսինի:

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**
Ենթակառուցվածքների ոլորտում Հայաստանի և Իտալիայի միջև համագործակցության հեռանկարների քննարկում:
Ծանոթություն Իտալիայի ճանապարհային ենթակառուցվածքների՝ ավտոճանապարհների, թունելների, կամուրջների նախագծման, շինարարության, պահպանման, շահագործման կառավարման և ճանապարհային անվտանգության ապահովման գործընթացներին ու դրանց հիմնախնդիրներին:

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**
Այցի ընթացքում քննարկվել են իտալական ինժեներական, շինարարական, նախագծային, խորհրդատվական ընկերությունների հետ համագործակցության խորացմանն առնչվող հարցեր:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**
Ընդլայնված կազմով հունիսի 12-ին Azienda Nazionale Autonoma delle Strade կազմակերպության հետ այցելել ենք 2,6 կմ երկարությամբ Tempio di Giove թունել, տեղում ծանոթացել թունելի շինարարության նորմերին, պահանջներին: Ներկայացվել է թունելաշինության ոլորտում իտալական փորձը, մեթոդները:
Նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանի հետ հանդիպում ենք ունեցել

Իտալիայի ազգային ճանապարհների միության (ANAS) և Շինարարների ազգային միության (Associazione Nazionale Costruttori Edili) ներկայացուցիչների հետ:
Հանդիպման ժամանակ ներկայացվել է Իտալիայի ճանապարհային ցանցի կառավարման համակարգը, քննարկվել են թունելների կառուցման, շահագործման հիմնահարցերը, ճանապարհային անվտանգության բարելավմանն ուղված միջոցառումները, ինչպես նաև Իտալիայում գործող թվային կառավարման առաջադեմ գործիքները, Smart Roads համակարգի առանձնահատկությունները: Տեղում ծանոթացել եմ ANAS կազմակերպությունում գործող ճանապարհների թվային կառավարման համակարգի աշխատանքներին, համակարգի առավելություններին և առանձնահատկություններին:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>
Այցի շրջանակներում Հայաստանի և Իտալիայի միջև ստորագրվել է ճանապարհային ենթակառուցվածքների ոլորտում համագործակցության հուշագիր: Այն ստորագրել են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանը և Իտալիայի ազգային ճանապարհների միության (ANAS) գործադիր տնօրեն Ալդո Իսին:
Հուշագրով սահմանվում է կողմերի միջև համագործակցություն՝ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված լավագույն փորձի, ճանապարհային ոլորտի նորարարությունների, նոր տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակման, ճանապարհային անվտանգության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև երկու երկրների մասնագետների վերապատրաստում, պարբերական ճանաչողական այցեր, որոնք կնպաստեն ճանապարհային ենթակառուցվածքների բարելավմանը:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>
Առաջարկվել է հետևողականորեն շարունակել հայ-իտալական ոլորտային համագործակցության շրջանակներում տարվող աշխատանքները:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

19.06.2023թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 06.06.2023թ. 618-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Գնել Սանոսյան, ՀՀ ՏԿԵ նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը Իտալիայի Հանրապետություն (Հռոմ)
5. Գործուղման ժամկետները 12.06-14.06.2023թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Հակոբ Վարդանյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհա ծախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		**0**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	***0***	***0***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	***0***	***0***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր՝		**0**
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***0***	***0***

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան
20.06.2023թ.